

11496



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 17 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 220 - 24

Նախաձեռնող՝

«Օն դիզայն» ՍՊԸ

Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 0910/Շ/10/18

Գործունեությունը՝

Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի
Բաղրամյան փողոց թիվ 12 հասցեում դպրոցի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 220 - 24

«17» հոկտեմբերի 2024թ.

Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Բաղրամյան փողոց թիվ 12 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Օն դիզայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին բնակավայր

Ներածական մաս. «Օն դիզայն» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրում կառուցել դպրոց:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Էջմիածին բնակավայրը գտնվում է Արմավիրի մարզում՝ Երևան քաղաքից 20 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Արմավիր քաղաքից՝ 24 կմ հեռավորության վրա: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան գոգավորության սահմաններում՝ Քասաղ գետի ավազանում: Գրունտային ջրերը բացված են 7.5-9.0 մետր խորություններում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր պրոցեսները և երևույթները, որոնք կարող են ազդել կառուցվող դպրոցի նորմալ կենսագործունեության վրա՝ բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:



Էջմիածին բնակավայրում գտնվող «Մետրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի շենքը» կառուցվել է 1960-ական թվականներին տիպարային նախագծով: Նախատեսվում է գոյություն ունեցող դպրոցի շենքը քանդել հիմնովին և կառուցել նորը՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

Քանդվող շինությունը տեղադրված է հարթ տեղանքի վրա և բաղկացած է 6 երկհարկանի մասնաշենքերից: Դպրոցի տարածքում կա նաև կաթսայատուն և պահեստային շինություններ, որոնք նախատեսվում են նույնպես քանդել հիմնովին: Դպրոցի տարածքում կա տեղադրված խաչքար, որը նախատեսվում է ապամոնտաժել, տեղափոխել անվտանգ վայր և նոր շենքի կառուցումից հետո վերատեղադրել այն դպրոցի տարածքում կամ պատվիրատուի հետ քննարկել այլ տեղամասերում տեղադրելու վերաբերյալ:

Նախատեսվող դպրոցն իրենից ներկայացնում է երեք հարկանի և մեկ նկուղային հարկով, բարդ հատակագծային լուծումներով շինություն: Շինությունը սեյսմիկ կարաններով բաժանվելու է երեք մասնաշենքերի: Շինության ամբողջ մակերեսով նախատեսվում է կառուցել նկուղ, որը կձառայի որպես ապաստարան և պահուստային սենյակներ:

Նախագծվող շինության մեջ տեղակայված կլինեն դասասենյակներ, լաբորատոր դասասենյակներ, գրադարան, ճաշարանային մաս, խոհանոցային մաս, սպորտային դահլիճ և ընդհանուր օգտագործման տարածքներ: Նկուղային հարկում տեղակայված կլինեն սանհանգույցներ և տեխնիկական սենյակներ: Դեպի նկուղ տանող աստիճանավանդակը նախատեսված է արտաքին առանձին մուտքով և ներքին աստիճանավանդակներով: Խոհանոցային, ճաշարանային, բժշկական և սպորտային դահլիճից նախատեսված են առանձին տարհանման ելքեր: Շինության հիմնական մուտքում նախատեսված են թեքահարթակներ՝ համաձայն ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի: Դպրոցի շենքում նախատեսված է վերելակ, որը իրար կմիացնի բոլոր հարկերը՝ բացառությամբ տանիքը: Շենքի բոլոր հարկերում նախատեսվում է իրականացնել սանհանգույց հաշմանդամություն ունեցող երեխաների կամ ծնողների համար: Շինության տանիքը հարթ է լինելու՝ կազմակերպված ներքին ջրահեռացման համակարգով: Տանիքում նախատեսվում է տեղակայել ֆուտբոլի դաշտը, քանի որ նախատեսված տարածքում չկա համապատասխան տարածք ֆուտբոլի դաշտի համար:

Դպրոցի նկուղային հարկից մինչև երրորդ հարկը սակավաշարժուն և հաշմանդամություն ունեցող խմբերի մատչելի տեղաշարժման հոսքը կիրականացվի վերելակով: Գլխավոր մուտքի աստիճանների հետ կազմակերպված կլինի թեքահարթակ՝ գործող նորմերին համապատասխան, նախատեսված են նաև սանհանգույցներ՝ համապատասխան կահավորումով:

Դպրոցի շենքին հատկացված հողատարածքի սղության պատճառով նախատեսվում է կաթսայատան շինությունը տեղադրել դպրոցի մասնաշենքերից մեկի տանիքում: Ելք դեպի տանիք իրականացվելու է աստիճանավանդակներով:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման և շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ գոյություն ունեցող ծառերը խոչընդոտ են հանդիսանալու տեխնիկայի տեղաշարժման համար, իսկ դրանցից որոշները գտնվում են նոր կառուցվող շենքի տարածքում: Գոյություն ունեցող ծառերից 68-ը ենթակա են հատման, որոնցից մի մասն անկենսունակ են, իսկ մի մասն էլ անհնար է տեղափոխել՝ մեծ չափեր ունենալու պատճառով, իսկ 17-ը՝ ենթակա են վերատնկման: Նախատեսվում է հատվող ծառերի փոխարեն և կանաչ գոտիներում տնկել նոր ծառեր և թփեր՝ կախված տեղանքի կլիմայական պայմաններից, մասնավորապես՝ հացենիներ, արևելյան տուաներ և այլն: Նշված ծառերը տնկելուց պետք է միմյանց միջև պահպանել 3.0-4.5 մ հեռավորություն: Դիտարկվող հողատարածքում կանաչապատման համար նախատեսվում է



տարածքի հարթեցումից հետո բերել շինհրապարակ սև բուսահող և փոել 250 մմ հաստությամբ՝ ընդհանուր 160 մ³ ծավալով: Այնուհետև ցանել սիզամարգի սերմերը: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի բերման աղբյուրները նախապես կհամաձայնեցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Պահպանման միջոցառումներ չի նախատեսվում, քանի որ բուսահողի ձեռքբերումը կիրականացվի շինարարական աշխատանքներից հետո և անմիջապես կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

Դպրոցի տարածք նախատեսվում է մուտք գործել երկու մուտքով: Դպրոցի ամբողջ պարագծով իրականացվելու է ա/բետոնե ճանապարհ՝ հակահրդեհային նորմերին համապատասխան:

Նախատեսվում է դպրոցի տարածքում տեղադրել նստարաններ և աղբամաններ: Նախատեսվում է հողատարածքի ամբողջ պարագծով իրականացնել ցանկապատ՝ 1800 մմ բարձրությամբ: Ցանկապատն ունի ցոկոլային մաս, որը երեսապատվում է բազալտե սալիկներով: Ցոկոլային մասում տեղադրվելու են մետաղական ճաղավանդակներ՝ 1200 մմ բարձրությամբ:

Դպրոցում մասնավորապես դահլիճում, ճաշարանում, խոհանոցում, սպորտ-դահլիճում նախատեսված են ընդհանուր օդափոխության համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ: Դասարանների հատվածում նախատեսված է կենտրոնացված կանգնակային արտածման բնական օդափոխության համակարգ և այլն:

Նոր կառուցվող դպրոցի էլեկտրամատակարարումը և գազամատակարարումը կիրականացվեն համաձայն գործող պայմանագրերի՝ համապատասխան լիազոր մարմինների հետ:

Ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացված է՝ հիմք ունենալով նախագծման առաջադրանքը և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանները:

Ջերմամատակարարումը և սառնամատակարարումն իրականացվելու են տանիքում տեղակայված կաթսայատնից և չիլլերներից:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի մակերես՝ 5575.0 քմ,
- կառուցապատման մակերես՝ 2620 քմ,
- կանաչապատման մակերես՝ 2803 քմ, որից 2161 քմ գեոցանցով, 642 քմ կանաչապատում (ծառեր, թփեր և այլն),
- սալվածքներ՝ 152 քմ,
- շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսը՝ 12200 քմ,
- աշակերտների քանակ՝ 675:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 13365 խմ, որից հետլիցքը՝ 3200 խմ, մնացած 10165 խմ քանակով հողը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի



տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, ոռոգման համակարգի սնում տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կկուտակվի մաքրման սարքավորման միջոցով մաքրված ջուրը:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
 - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
 - աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
 - տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝
- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
 - կառաջանա շենքերի քանդումից շինարարական աղբ, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
 - կառաջանա կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
 - փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 700 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի էջմիածին բնակավայրի «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ շենքում /հասցեն՝ ք. էջմիածին, Կոմիտասի հրապարակ 0 շենք/ անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, Վաղարշապատի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:



4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Օն դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Բաղրամյան փողոց թիվ 12 հասցեում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան